1019 Արևելքից մինչև արևմուտք,

Արևելքից մինչև արևմուտք,
Եվ հյուսիսից մինչև ի հարավ,
Բոլոր ազգեր, ժողովուրդներ,
Օրհնեցեք Արարիչ Աստծուն,
Քանզի Աստված հրաման ըրավ,
Որ խավարեն հավերժ լույս ծագի,
Ինքը մեր սրտերում ծագեցավ,
Փառքի լույսով Հիսուս Քրիստոսի:

Հիսուս դու ես Լույսը աշխարհի,
Հիսուս դու ես Հույսը աշխարհի,
Հիսուս Արեգակ արդարության,
Հույսի Աղբյուր բարության:

Դե ելեք ով քրիստոնյա հայեր,
Փառքով պիտ դիմավորենք Աստծուն,
Նա մեզ համար զոհեց իր Որդուն,
Որ բացվի հայոց հավերժ գարուն,
Ցնծացեք դուք հայեր միաբան,
Փառաբանենք մենք Հայր Աստծուն,
Պիտ ուղարկի Փրկիչ Որդուն,
Հավաքի հայերին իր գրկում:

Հիսուս դու ես Լույսը հայերի,
Հիսուս դու ես Հույսը հայերի,
Հիսուս Արեգակ արդարության,
Հույսի Աղբյուր բարության: